ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ԼԵԶՈՒԱԿԱՆ

1.— ԱՌԱԾՆԵՐ ԿԻՒՐԻՆԻ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌՈՎ

Խենթէն կուչտ եմ, խելօքէն կարօտ։
Խենթին ճաղարջն Աստուած կ'աղայ, խենթն է կ'ուտէ կ'ելլէ կը խաղայ։
Էշը փալանով, մարդը հալաֆով։
Հերսէն(1) *եղով*, Բէլլէն(2) *սխտորով։*
Էրկրի տուն, էրկրի տղով։
Մալէզը պերանանիս(3) *էրեց, ուր է թէ ապուր մ'ըլլար։*
Հաչան շունը չի խածներ։
Կովիս մեռեր է, խապլս կըյեր է։
Կակըրճան հաւը ածան կ'ըլլայ։
Հէյիր էշէյիդ եկ, ղըճըրտա առղայէդ եկ։
Պաց բերանը անօթի չի մնար։
Մեռելը օրը կու լան։
Ծուկը կոլը կ'իյնայ։
Էրկինքէն դասնախ եաղմիշ(4) *ըլլայ նը, մեր կլոխը մէկ հատ չ'անցնիր։*
Տուռըդ կոց պոնէ, գրացիդ ղորդ պոնէ։
Պակը(5) *ծուռ է, կովը կաթ կօ չի տար։*
Խլլոտին մուխը մըհանա է։
Էրկըրի նեռած քարը խէրուն(6) *չ'ըյնիր։*
Էրկըրի վրայի շապիկ չի կտրտիր։
Տուռիդ փակեմ նը էրկիր դուրս կը մնայ։
Ատորցողը(7) *պատէն վէր կ'ըյնի։*
Էրկըր որը նալին կը քըշտէ որը մըխին։
Էրկըրի(8) *մնացողը անկնիկ կը մնայ։*
Մէկուն հինը, մէկուն նոր։
Հարսիկ քեզ ասիմ, նիրուկ տու հասկցիր։
Կոդ(9) *սիրտը տոդ։*
Սուտ խենթ էղէր է, վանքին հաւը կ'ուտէ կօ։
Քթին կինծը ուտող — (չափազանց կծծի)։
Զէնիկէթը իշու ագի(10) *է, նէ կ'երկննայ, նէ կը կէրճընայ։*
Ծուկը կլխէն կը հոտի։
Ինչուկ որ հաստը պարկընայ, պարակին հոդին կ'ելլէ։
Պամպասանք չէ, պանն ասանկ է։
Կուտ կերաւ լեռն էլաւ (սաստիկ զայրացաւ)։
Լեռը լերան վրայ կ'ըլլայ, տունը տանը վրայ չըլլար։
Անցուկը մոռցուկ կ'ըլլայ։
Ոտքիդ եօղանիդ կէօրէ (11) *էրկրընցուր։*

---

1) Հերիսան։ 2) Գլուխը։ 3) Բերաննիս։ 4) Թիթեղէ կլոր շրջանակ։ 5) Բակը։ 6) Հեռուն։ 7) Անապարողը։ 8) Ուրիշի։ 9) Գող։ 10) Պոչ։ 11) Համեմատ, չափ։

Պէրանը պանալուն տեղ, էշքը թող պանար։
Ձեմ ուտեր, ճէպիս տիր,
Ճաղարմը ճուրն է դացեր, չախչախ կը պնտռես։
Կատու չեղած մուկ կը պռնես։
Թէմպէլութենէն էշուն «քեռի» կո կ'ըսէ։
Զի լացողուն ծիծ չեն տար։
Հէ մ'էլ հարս ըլլամ նը ծին ղորդ կը հեծնիմ։
Շանը պօղազը(12) ճիկէր կախեր է։
Ղընտրլեցաւ թէնգիրէն,(13) կըտաւ դափախը։(14)
Դգալով կը հաւաքէ, չօմչայով կը տառտղնէ։
Իզանը տակ հորթ կո պռեն։
Խէրուի(15) սուրբը զօրաւոր կ'ըլլայ։
Ծեռքը պաց է (Առատաձեռն է)։
Ծին էկեր է, օտքերնիս կը մսի։
Մէնծ էշը ախոռը մոռցանք։ (Ինդիրին կարեւոր կէտը մոռցանք)։
Սոխ կերած չեմ օր սիրտիս էրի։
Կէտինն էնկէն(16) ունի։ (Զիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեցի)
Մենծ չունեցողը մենծ քարի մը տանիշմիշ(17) կ'ըլլայ։
Պերանը քաք չի տրջիր (Գաղտնապահ չէ)։
Կատուն մուկը փորուն համար կը պռնէ։
Ինք իր շուքէն կը վախէ։
Քէպապին հոտին գնաց օր էշ կո տաղեն։ (Ցուսախաբ)
Մարտի հավա (18) է (փուփոխամիտ)
Ողջ կըլոխիս աւետարանին տակ տըրի (19) (Վտանգի ենթարկուիլ)
Ուզան պերանը կթան կովէն աղէկ է։
Ուտիմ նը միս է, նետիմ նը մատաղ է։
Տանակն ինքն իր կոթը չի կէփեր։
Էրկրրի(20) չուանով դուլին(21) չ'ըջնուիր։
Տեղէն էլլողուն տեղը կ'առնին, էրիկը մեռնողուն՝ կնիկը։
Տանծ էիր նը հասար, խնծոր էիր նը կէյմրրեցար(22)։
Մէյվային(23) աղէկը արջը կ'ուտէ։
Հինգ փարա տուինք պաշլայել(24) տուինք, տաս փարա կու տանք չի թէրկէր (25)։
Քարը խորը դրաւ։
Քրիստոս կը փսփսայ (Խաղաղութիւն)
Հերքէշ ինքիր փիսին «փու» չասեր։
Հաւը հաւ է նը, ճուր խմած ատենը էրկինքը կը հէյի։
Ծայը (ծայը) նստիր օր լիր դաս։
Իծն իր օտացը կը կախեն, օշխարն իր օտացը։
Կէլու աւետարան կը կարդայ։ (Ունայնաբան է)
Պօյիդ լման, խելքիդ մըկան։
Աշխարքին մալը աշխարք կը մնայ։

---

12) Կոկորդը։ 13) Գլտորեցաւ կաքսան։ 14) Կափարիչը։ 15) Հեռուի։ 16) Ականջ։ 17) Կը հարցնէ։ 18) Եղանակ, օդ։ 19) Դրի։ 20) Ուրիշի։ 21) Հորը։ 22) Կարմրեցար։ 23) Պտուղին։ 24) Սկսիլ։ 25) Զի կենար։

Մաղն էրկենին խելքը կէրճ կ՝ելլայ։
Ի՛չ տէ՛ (որտեղ) քար մը վերցընես նը տակէն կ՝ելլէ։ (Ամէն բանի մէջ մատ ունեցող)։
Ցանածըդ կը քաղիս։
Ղորդ խորաքոդը(26) ծի մը հեծնել փախելու է։
Ղորդ զուրցողուն կլոխը կոտոշով է։
Մօրուք չունիմ օր խօսքիս պռնէք։
Պաց ամանին մէջինը վով օր է (ով որ ըլլայ) կը կիտնայ։
Անոսկոր միս չըլլար։
Էս կ՝ըսիմ, էս կը լսիմ։
Շանը քար քշտեն(27) նը տիրուն խաթրը կը հէյլին։
Կէծ ու կրակ է (կրակոտ է)
Կէծկլտուկ կ՝ըլմանի (կրակոտ է)։
Կէյմիր խնծորին քար քըշտող շատ կ՝ըլլայ։
Թէք ինկիզին (28) քար չի նետեր (Շահախնդիր է)։
Էրկու ծաղը մէկ քարով քըշտել։
Հէրքէշ ինքիր Մարկոսը կու լայ։
Կու լամ, կը ծըծաղիմ տէրտիս մաքըրն է։
Էշքըդ փէնեէրէն (29) է, խելքըդ թէնեէրէն (30) է։
Հաստ ու պարակ մէկ գին է, վայ պարակ մանողուն։
Ղորդ զուրցողը տեղ չունենար։
Խենթը կլոխը կոտոշ չունենար։
Խամերնիդ անուշ է տէ՝ խասերնիդ լեղի (Այս խօսքը մայրերը իրենց անհնազանդ զաւակներուն ուղղեն)։
Շունն ուտէ, ճիկէր է։
Աշխարքը քարս(31) է, տիհա(32) նոր հարս է։
Ուղունկ(33) ունիս նէ կլոխիդ քերէ։
Մէկ ծեռով էրկու ծմերուկ չի պռնուիր։
Էս իմ արծած խողրս կիտիմ։
Մէյմէկի պերան թքած են (համախորհուրդ են)։
Ուղունկ(34) ու միս են (սերտ բարեկամ են)։
Ձուրը տեսնէ ծուկ կ՝ըլլայ, ծակը տեսնէ մուկ կ՝ըլլայ։
Սաղ էշքը սօլին շահ չունի։
Է՞ծն է էծուն «ոռըդ պաց է» կ՝ըսէ։
Էրէսէն վըլի վըլի, էտէւէն սուր ածելի (կեղծաւոր)։
Կիրկիս(35) նստեր մօրուքըս կը փետտէ։
Ծեռքը ծուռ է (գող է)։
Էշքը ծակ է (ագահ է)։
Էրէսը ճուրով է (աներես է)։
Մաղը ծակ է (խօսածնիս կը հասկնայ)։
Ոսպը քարոտ է (խօսածնիս կը հասկնայ)։
Կըլոխը պամպակ չիկայ (ապուշ է)։
Հօխան չամէն է (ապուշ է)։

---

26) Շիտակ խօսողը։ 27) Զարնեն։ 28) Ընկոյզին։ 29) Պատուհանը։ 30) Կաթսան։ 31) Քաղցր։ 32) Տակաւին։ 33) Եղունգ։ 34) Եղունգ։ 35) Գիրկս։

Պէրնէն խուլ է (ապուշ է)
Խօրասանը արտ ունի (ապուշ է)
Էնկէնը(36) ծակ է (արթուն է)։
Վէպ չունի տեղը կ'աւլէ։
Էշքը կուշտ է։
Անկից հաւկիթ առնողը մէջը ղեղնուց չի կտներ (խարդախ է)։
Խենթն ասաց, խելօքը աւտաց։
Մըկանը շէոը ճաղջին շահ ունի։
Էնկէնը կախ է, սիրտն ուրախ է։
Ադամ (ալ) խաբուեցաւ, տրախտէն ընկաւ։
Էշն է տրեր իր մտին, տոպրակ մը կարի քրթին։
Նուկին պակաս է (անմիտ է)։
Սեւէն էլանք, սեւ ծուքն ընկանք։
Պարտքը տալով, մեղքը լալով։
Հաշնետունը (հարսնեստուն) չի կիտէ, էրդինոցը (յարդանոցը) քէշկէֆ (քէշկէք, ցորենէ կերակուր) կը պռէ։
Թթու քացախ, քարէ հաց (անշահ)։
Խործանայ (վայրի խոտ մը որու արմատը կ'ուտուի, թերեւս խաւարծիլ) պofայ պofայ, տու կընայ հոգիդ հոդայ։
Շանը եաթախը հացի մայում չի կըտուիր (փշրանք)։
Ճուրն ընկնողը, չէօփ կը պռէ։
Պէրանը սրտին էվէլցուկը կը զուրցէ։
Մօրը մանածը ներկած է (վարպետորդի)։
Իտի մօրիդ ախճիկութիւնն էր (ժամանակը անցած է)։
Տօնին ու կաղանդին Յուղային օրդին դուրսը (այդ միջոցի սաստիկ ցուրտը ակնարկել)։
Հաղայ նը, կօտին կը կըյի (սաստիկ աղքատ)։
Մուկն ըյնի նը կըլոխը կը ծակի (սաստիկ աղքատ է)։
Դրգալին պերնովը կը կերցնէ, կոթովը աչքը կը հանէ։
Քարին մէջ էրին (արիւն) կայ։
Ինք տիկ էղեր, էրկիրի բերան էրեր է։
Սատկած էշ կը պռէ(37) օր նալը քաշէ։
Ղայնանադ քեզ ամուր կ'ուղէ էղէրէմ (պատրաստ կերակուրի սեղանի մը վրայ եկողուն կ'ըսուի)։
Կատու չեղած մուկ կօ պռնես։
Էրկու խենթը խալաթին քէնտիրն են կըյեր։
Օշլոտը(38) քերուեր է, անօթին հէյիր է։
Սոխին քարսը չըլլար։
Մէյմէկի իշին զուշուն զսմինն(39) կօ (սաստիկ հակառակ են իրարու)։
Էրէսէն ընկածը, քառսուն պէղիկ(40) կ'ըլլայ կօ (սաստիկ տրտում է)։
Ճէհրատ մանէ որ իլիկիտ լէննայ (դործդ յարատեւէ)։
Նէ էտեւէն կ'երթայուի, նէ առջեւէն։
Էտեւէն էրթաս նը կը տէփիկէ(41), առջեւէն էրթաս նը կը խաղնէ։

---

36) Ականջ։ 37) Կը փնտռէ։ 38) Ոչլոտը։ 39) Փանփուշտ արձակեն։ 40) Կտոր։ 41) Ոտնահարէ, կից կու տայ։

Շանն ագին կապուած է (Շատ առատ է, արժէք չունի)։
Պէտիհավա(42) պատանք կըտնէ նը, առջի իրիկունը կը մեռնի։
Անցանք տառցանք պարեւ ձեզ։
Էս աղա, տու աղա, տէիրմէնը(43) վիվ (ով) աղայ։
Խորթ մօր կորեկ է (կը պատմուի թէ ժամանակաւ խորթ մայր մը իւր խորթ աղջկանը առջեւ դրեր է շատ մը կորեկի, ցորենի եւ այլ սերմերու խառնուրդ մը, եւ հրամայեր է որ իրարմէ բաժնէ. երբ խեղճ աղջիկը չէ յաջողեր ի գլուխ հանել այդ դժուարին գործը, մօրմէն պատժուեր է։ Այդ ատենէն ի վեր երբ դժուարին գործ մը կ'առաջարկուի կ'ըսեն այս)։
Տէրըդ ժամ չի մտներ, դու էստեղ պատարա՞գ կ'ընես։ (Սոյն առակը Կիւրինցիք Ուլաշցիներէն փոխ առած են։ Ուլաշ գիւղ մըն է Սվազէն վեց ժամ հեռու դէպի հարաւ։ Ատենօք Ուլաշցի մը ախոռին դուռը մոռացմամբ բաց կը թողու ուր դտնուած հորթերէն մէկը դուրս կ'ելլէ եւ գիւղին եկեղեցւոյն դուռը բաց դտնելով ներս կը մտնէ եւ մինչեւ սեղանը կը բարձրանայ. ժամկոչը դուռը դոցելու ատեն սարսափահար կը տեսնէ հորթը սեղանին առջեւ, եւ զայն դուրս կը վռնտէ եւ վերի առածը կ'ըսէ։ Այս առածը կը դործածուի երբ մէկու մը վրայ տարօրինակ արարք մը տեսնուի)։
Օրը շատ է քանդ կորեկը։
Աստուծու պըյհածը կէղը(44) չուտեր։
Վեր թքեմ մօրուքիս, վար թքեմ էրէսիս։
Ուտողը չի կիտէ, փչողը կիտէ(45)։
Էրկըրի էշք է հաներ, տիրուն հոգին։
Էշքը տեսածը տիրուն խէր չըներ։
Փըչած օճախը ճուր չուզեր։
Էրդնոցը պառկող շանը, դուշուն (46) չի տպնիր։
Շան ագին քարոց տնելով չի դոբդիր (47)։
Խրատ խրատ լեռն ի վեր, էս կօ կ'երթամ ծորն է վէր։
Փորը ճեղքես նը, այր մը չ'ելլեր։
Էրդ տաս՝ կարի չուզեր։
Զօրավէն (48) թաղին ավը չերթար։
Մէկը մէկուն էգի մը տուեր է, էնի էնոր կիզ մը խաղող տուեր չէ։
Մայր փըշելով փոր չի կշտանար։
Կրնա մեռիր, էկօ սիրեմ։
Էշն իշուն քովը կապես նը, եա առօք կ'առնէ, եա փառօք (բարօք)։
Ուզողուն մէկ երեսը սեւ, չի տուողուն էրկու երեսը։
Խենթը խրատն ինչ էնէ, սեւը սապոնն ինչ էնէ։
Կուշտն անօթուն մանր է փըշեր, անօթին էրկ-էրկուք է վերցուցեր։
Կատուն միսին չի հասնի նը, պապուն հոգուն կը սէյպէ (49)։
Թեւն օսկի ապռճան ունի (արհեստաւոր է)։
Ինչուկ որ աղը դայ նը, մատաղը կ'երթայ։
Ուղտը կլլող՝ մժեղը քամող։

---

42) Զրի։ 43) Զաղացքը։ 44) Գայլը։ 45) Գիտէ։ 46) Փամփուշտ։ 47) Շտկուիր։ 48) Բոճի։ 49) Կը համարէ։

Էրկբրի տղայ ասեղի ծակէն Հընտրստան կը հէյի։
Ժամը կը հանէ մարդուն սրտին կամը։
Կը ծնի էծը տէ կը տեսնեմ ուլը։
Ճուրն ընկողը արծեւէն չի փախիր։
Կէտէն անցար տէ կաւառը կո խղդիս։

2.– ԿԻՒՐԻՆՑԻՆԵՐՈՒ ԱՆԷԾՔՆԵՐԷՆ ՏՐՑԱԿ ՄԸ

Աստուած դայ հախէդ (1)
Գետնին եօթը դաքը (2) *անցնիս*
Քէօր (3) *ըլլաս*
Իլէշդ (4) *դայ*, իլէշդ *տեսնէի*
Խէրը (5) *չտեսնես*
Շան պողազ (6), *չիչ պողազ*
Զեռքդ չորնայ
Չորնալիք
Շան ձյնած (7), *շան լակոտ*
Ղարա խապարդ (8) *դայ*
Տունը կլոխիդ *փլի*
Օճախդ անցնի, մարի
Օղիկ օղիկ ըլլաս
Կծիկ կծիկ ըլլաս
Իլիշիկդ (10) *կըլի*
Ղարարքուդ (11) *վերնայ*
Սատկիս շըլլամ (12)
Չորնաս չըլլամ
Ուշախներուդ (13) *խէրը չտեսնես*
Ջժմնիս չըլլայ
Էշկիդ քէօրնայ (14)
Ղարա դազայի *դաս* (15)
Մէկ փապուճով եօթնէրիկ էրթաս
Սեւ նաշըտ (16) *վերնայ*
Շիլլիդ (17) *տակդ դայ, մնայ*
Էրկինքին կրակը թափի վրադ
Գետինը մնեն (18)
Աշխարէն մայհուամ (19) *մնաս*
Պատին տակը մնաս
Էրկու էշկիդ (20) *քէօրնայ*
Էտ (21) *օրը չտեսնես*
Օր արեւ չի տեսնես
Էրթաս տէ չի դաս
Ժամուն դուռը մնաս
Իշալլահ (22) *կը սատկիս*
Աստուած հոգիդ առնէ
Էրկոց էրիկ երթաս
Դուռ դուռ մուրաս
Պառկած տեղէդ չելլաս
Աստուծմէ կտնես (23)
Չորնաս մնաս
Չոլուխ չօնուխի (24) *տէր չըլլաս*
Կէնն ու կէնէնչ (25) էրթաս
Տունդ աւրի

3.– ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԿԻՒՐԻՆԻ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌՈՎ

1. *Կետնէն կ'ելլէ* քիւրքով տէտէ (*կաղամբ*)
2. *Էրկան* մազի *կէնէնչ* թազի։ (*Կանանչ չիչ*)
3. *Լերանն էտեւ* պուումա (1) *մը խոտ*։ (*Ծիրանի գօտի*)
4. *Լեռանն էտեւ կէս հաց*։ (*Լուսին*)
5. *Էլայ լեռը* վէրէցաւ (2) *կոգիս սըսէռը*։ (*Կարկուտ*)

---

1) Իրաւունք։ 2) Ծալքը։ 3) Կոյր։ 4) Դիակդ։ 5) Բարիքը, լաւը։ 6) Կակորդ։ 7) Ծնած։ 8) Սեւ լուրդ։ 9) Գլխուդ։ 10) Հոգիդ, շունչդ։ 11) Մարմինդ, կերպարանքդ։ 12) Իշալլահ։ Աստուած տայ։ 13) Պզտիկներուդ։ 14) Աչքդ կուրանայ։ 15) Սեւ արկածի։ 16) Դուպաղդ։ 17) Վիզդ։ 18) Մտնես։ 19) Զրկուած։ 20) Աչքդ։ 21) Այդ։ 22) Աստուած տայ։ 23) Գտնես։ 24) Երախաներու։ 25) Երիտասարդ ու կանանչ։ 1) Անուր մը։ 2) Թափեցան։